ՀՈՒՅՍԻ ԽԱՐԻՍԽԸ – ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ
THE ANCHOR OF HOPE – JOY

ԻՆՉՈՒ՞ ՀՈՒՅՍ: ԻՆՉԻ՞ ՎՐԱ Է ՀԻՄՆՎԱԾ ՄԵՐ ՀՈՒՅՍԸ: Ո՞ՐՆ Է ՄԵՐ ՀՈՒՅՍԻ ԱՐՄԱՏԸ ԿԱՄ ՀԻՄՔԸ:

Բանալի Համարներ. Եբրայեցիս 6.11, 6.18-20, 11.1-2

*Եբր. 11.1-2 - 1 Հավատքն էլ **հուսացած բաների** **հաստատությունը**՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է: 2 Որովհետեւ նորանով առաջինները վկայութիւն ընդունեցին:*

*11 Եւ փափաքում ենք որ ձեզանից ամեն մէկը նույն ջանքը ցույց տա, **որ հույսը հաստատ մնա մինչեւ վերջը:***

*18 Մենք **հաստատուն** մխիթարություն ունենանք. մենք որ ապավինեցինք մեր առջեւը դրած **հույսը բռնելու.** 19 որը մեզ համար **հաստատուն և անշարժ խարիսխ է,** որ թափանցում է վարագույրից ներս, 20 Ուր որ մեզ համար Առաջնորդ մտավ Հիսուսը, Մելքիսեդեկի կարգի պէս հավիտենական Քահանայապետ եղած:*

> *1 Պետ. 3.15 - 15 այլ Տիրոջը՝ Քրիստոսին, ձեր սրտերում սուրբ պահեք ու միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մեկին, ով **ձեր մեջ եղած հույսի մասին** հարցնի:*

- ***Սովորաբար Քրիստոնյաները պետք է ճանաչվեն որպես հույս ունեցող մարդիկ:***

- ***Աստվածաշնչյան հույսը անորոշ ցանկություն չէ: Դա վստահ ակնկալիք է:***

  *Եբր. 11.1-2 - 1 Հավատքն էլ **հուսացած բաների** հաստատությունը՝ եւ չերեւեցող բաների ապացոյցն է:*

- ***Ո՞րն է քրիստոնեական հույսի բովանդակությունը: Ինչի՞/Ու՞մ վրա ենք մենք հույս դնում:***

  Հիսուս Քրիստոսի հայտնությանը (Տիտոս 2.13)

  Տիտ. 2.13 - 13 Սպասելով այն երանելի հույսին և մեծ Աստծու ու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնությանը

  Մեր մարմինների փրկագնումը (Հռոմեացիներ 8.23)

  Հռ. 8.23 - 23 Եւ ոչ միայն նորանք, այլ ինքներս էլ որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք էլ մեր անձերում հառաչում ենք՝ որդեգերութեանն սպասելով այսինքն մեր մարմնի ազատութեանը:

  Մեր արդարության ավարտը (Գաղատացիս 5.5)

  Գաղ. 5.5 - 5 Որովհետև մենք Հոգով սպասում ենք հավատից եղած արդարության հույսին:

Վկայել Աստծո փառքը (Հռոմեացիներ 5.2)

Հռ. 5.2 - 2 Նրա միջոցով հավատով ընդունել ենք այս շնորհը, որի մեջ մտել ենք ու կանք և պարծենում ենք Աստծու փառքի հույսով:

Ժառանգել հավիտենական կյանքը (Տիտոս 1.2; 3.7)

Տիտոս 1.2 – հավիտենական կյանքի հույսով, որ հավիտենական ժամանակներից առաջ խոստացավ անսուտ Աստված

Տիտ. 3:7 - Որ նորա շնորհքովն արդարացած ժառանգ լինենք հաւիտենական կեանքի յոյսով:

- ***Ո՞րն է մեր քրիստոնեական հույսի պտուղը: Ի՞նչ է բխում հույսից: Արդյո՞ք հույսն առօրյա կյանքում ինչ-որ բան է տալիս:***

1. ***Հույսը տալիս է ուրախության պտուղ:***
2. *Հույսը տալիս է սիրո պտուղ:*
3. *Հույսը տալիս է համարձակության պտուղ:*
4. *Եվ հույսը տալիս է համբերության պտուղ:*



ՀՈԲ 14:7
Որովհետև ծառն էլ դեռևս հույս ունի. եթե կտրվի, դարձյալ կծլի, ու նրա ճյուղերը չեն պակասի:

I. ՄԵՐ ՀՈՒՅՍԸ ՊԵՏՔ Է ԴՐՍԵՎՈՐՎԻ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

OUR HOPE SHOULD SHOW IN JOY.

Հռոմեացիս 5.2-5 – 2 Նրա միջոցով հավատով ընդունել ենք այս շնորհը, որի մեջ մտել ենք ու կանք և պարծենում ենք (rejoice) ***Աստծու փառքի հույսով:*** *3 Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև նեղությունների մեջ ենք պարծենում՝ գիտենալով, որ նեղությունը համբերություն է գործում, 4 համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: 5 Իսկ հույսը չի ամաչեցնում. որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ:*

Բայց ինչպե՞ս է այս հույսն ու ուրախությունը կապված Սուրբ Հոգու աշխատանքի հետ Հռոմ. 5:2–4-ում, 15:13-ում:

5 Իսկ հույսը չի ամաչեցնում. որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ:

Հռ. 12:12 - 12 Հույսով ուրախացե՛ք, նեղությանը համբերեցէք, աղօթքում հարատեւեցէք:

Հռ. 15:13 - 13 Եվ հույսի Աստվածը թող ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ լցնի հավատի մեջ, որպեսզի Սուրբ ***Հոգու զորության հույսով առատանաք:***

ԱՄՓՈՓՈՒՄ

Այժմ մենք կարող ենք միավորել կտորները. նախ՝ Աստծո սերն է, որն ընտրում է մեզ և կանչում, արդարացնում և մեզ Աստծո փառքի մեջ բաժին է երաշխավորում: Այնուհետև կա Սուրբ Հոգու աշխատանքը, որը հորդում է Աստծո սերը մեր սրտերում, որպեսզի մենք ճանաչենք այն և փայփայենք այն: Այնուհետև Աստծո սիրո այս խոր փորձառությունից անսասան հույս է աճում նույնիսկ տառապանքի մեջ: Եվ վերջապես այս հույսով մենք ուրախանում ենք: